ԵՐԵՄՆԵՐՈՐԴ—ՏԱՐԻ—ԹԻՒ—2991 ԵՐԵՔՇԱԲԹԻ—15—ՍԵՊՏԵՄԲԵՐ—1881 Ն. Տ—27—ՍԵՊՏԵՄԲԵՐ—1881

ՊԱՏՄԱՆԹ

Տարեկան գին Կ. Պոլսոյ հմար. 7 Մէջ.
» » Գաւառաց » 9 »
Վեցամս. » Կ. Պոլսոյ » 4 »
» » Գաւառաց » 5 »
Օտար թղթատարով ղրկուած 2 Լիրա

Մանուցման տողը մէկ անգամի համար 3 ղրշ, երկու անգամի համար 2 ղրշ է. աւելի անգամներու համար զատ սակարկութիւն կը լինի։

ՄԱՄՐՄ

ԼՐԱԳԻՐ

20 Փարայ — ՀԱՆԱՊԱՀՈՎՐԵԱՑ — 20 Փարայ

ՊՈՍՏԱԳՐՈՒԹԻՒՆ

Դուրս գնացած լրագրաց ճանրու տախտը խմբագրութեան վրայ է։

Լրագրոյս վերաբերեալ նամակ կամ որ և իցէ գրութիւն խմբագիր—Տնօրէնին պիտի ուղղուի, Կ. Պոլիս Պահնէ-Գաբու Ճէլալ պէյ խանի թիւ 31 Մասիսի գրասենեակը։

Ճանրու ծախքը չվճարուած նամակ չընդունուիր։

Չտպուած նամակ, յօդուած, եւ եւ չեն տրուիր։

ՁՐԻ ԼՐԱԳԻՐ ԿԱՐԴԱԼԸ ԳՈՂՈՒԹԻՒՆ Է — ՁՐԻ ԼՐԱԳԻՐ ԿԱՐԴԱԼԸ ԳՈՂՈՒԹԻՒՆ Է

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հեռագրական լուրեր. — Խառն լուրեր. — Ազգային լուրեր. — Ազգային տեսութիւն, (Տ. Մ. Ազարէգեան). — Հայք ի Զինաստան. Շաբ. Լ. Ալբիկ — Այնթապ. — Վարժապետական Գիւղ. — Լեզուաբանական, (Հ. Սերովբէ Տէրվիշեան). — Պաշտօնական ծանուցում. — Դրամական. — Ծանուցմունք։

ՊՈՍՏԱՆԴԻՆՈՊՈԼԻՍ 15 ՍԵՊՏԵՄԲԵՐ

ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

—o—

Լոնտրա 26 սեպտ.

Էյուպ խանի զօրքերը բոլորովին յաղթուեցան Էմիր Ապտ-իւր-Ռահմանի զօրքերէն, ճակատամարտի մը մէջ որ տեղի ունեցաւ ամսոյս 22ին։ Էմիրը գրաւեց զՔանտահար, և պիտի շարունակէ քալել Հէրաթի վրայ, ուր փախած է, Կ'ըսուի, Էյուպ խան, իւր վաղեմի յաղթական հակառակորդը։

Թրանսվալի ազգային ժողովը մերժեր է Անգլիոյ հետ կնքուած պայմանագիրը։

Աթէնք 26 սեպտ.

Գէորգ թագաւորն այսօր Պ. Քումունտուրոսի հետ երէկ Արտա գնաց, որ առաջին կայանն է այն պտոյտին զոր Ն. Վեհափառութիւնը պիտի ընէ նոր ստացած գաւառաց մէջ։

Այս առաւօտ հասած հեռագրէր

Թունուզ 26 սեպտ.

Ճէմէլի մօտ եղած կռուի մէջ Ա-րաբներն յիսունի չափ մեռեալ և բազմաթիւ վիրաւոր ունեցան։

Փարիզ 26 սեպտ.

Երեսփոխանական ժողովոյ ձախակողմեան անդամք այսօր գումարում մ'ընելով յայտագիր մ'ընդունեցին, որ Ափրիկեան գործոց մթութիւնը նկատելով, ժողովին անմիջապէս գումարումը կը խնդրէ։

Ուաշինկթըն 26 սեպտ.

Կարթիլա զօրավարն այսօր թաղուեցաւ իրիկուան դէմ։ Խուռն բազմութիւն ներկայ էր. նախարարք, երեսփոխանք, ծերակուտի անդամք և 1,500 քաղաքագէտք, երմտագէտք և այլ նշանաւոր անձինք ներկայ էին։

Լոնտրա 27 սեպտ.

Թրանսվալի Ազգային ժողովը դեռ կը քննէ պայմանագիրն. հաւանական է ուրեմն որ բոլորովին չմերժէ։

Կը ծանուցուի թէ Լիւքսէնպուրկի Ազգային Պանքան անանկացեր է։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

—

Պաղտատի նախորդ կուսակալ Ապտ-իւր-Ռահման փաշա նախագահ անուանեցաւ հանրօգուտ շինութեանց յանձնախմբին։

Դեկրատի նախորդ դեսպան Սերվէթ էֆէնտի երկրորդ կարգի դեսպան անուանեցաւ Մատրիտի նորահաստատ Օսմանեան դեսպանութեան։

Պալայի աստիճան տրուեցաւ Միտիլլիի կառավարիչ Բէմալ պէյին։

Իփէք (Ալպանիոյ մէջ) կառավարչութիւն եղաւ, և կառավարիչ անուանեցաւ (Կոսինէլի) Ալի փաշա։ Փրիզրէնտի կառավարիչ նշանակեցաւ Հասան փաշա։

—Ֆար տիւ Պոսֆոր կը ծանուցանէ թէ տէրութեանց դեսպաններն Հայկական խնդրոյն նկատմամբ իրենց կառավարութիւններէն խընդրած նոր հրահանգներն ստացեր են։

— Կը ծանուցուի թէ Բ. Դրան և Լոյտ Տիւֆերինի միջև գոյացած համաձայնութեան մը համեմատ, տէրութեան վրայ առնելիք ունեցող Անգլիական հպատակաց 280 հազար լիրա պահանջքին համար Հէվալէները պիտի տրուին գաւառաց մնաուկներուն վրայ։

—Եւրոպական արժեւոր պատուիրակներուն և կայսերական կառավարութեան միջև բանակցութիւնք կը շարունակեն բաւական դոհացուցիչ կերպիւ։ Ղալաթիոյ սեղանաւորաց հետ ծագած փոքր դժուարութիւնն ալ իրաւախոհութեամբ կարգադրուելու ճանրու մէջ է։

Այս վերջինները շաբաթ օրն Օսմանեան Պանքան գումարուելով, վեց անուղղակի տրոց յանձման մասին արժեւոր պատուիրակներուն տրուելիք պատասխանին վրայ խորհրդակցեցան։

Կ'ըսուի թէ սոյն գումարման մէջ համաձայնութիւն գոյացեր է տարին 670000 լիրա, հարիւրին 5 տոկոս և հարիւրին 3 գլխավճար ստանալու վրայ, մինչդեռ առաջ 800000 լիրա, հարիւրին 5 տոկոս և նոյնչափ ալ գլխավճար կը պահանջէին։ Իսկ Եւրոպական պատուիրակաց 600000 լիրա հարիւրին 5 տոկոս և հարիւրին 2 գլխավճար կ'առաջարկէին։

Կը յուսացուի որ վերոյիշեալ հիման վրայ համաձայնութիւն պիտի կընայ հաստատիլ։

—Ճերիտէի Հավատիս կը ծանուցանէ թէ Արապկիրի Հայոց առաջնորդ Եղնիկ եպիսկոպոսի դէմ եղած ամբաստանութիւնը՝ թէ ժողովուրդն յապստամբութիւն կը գրգռէ եղեր, ըստ բաւականին ապացուցեալ չլինելով պատրաստուած ամբաստանագրոյն մէջ, կատարեալ քննութիւն մ'ընելու հրաման ղրկուած է Արապկիրի կառավարութեան։

—Քոլէրա ծագած է Ռուսիոյ Քրէմէնչէ քաղքին մէջ, և Աւստրիա զինուորական շղթայ հաստատած է սահմանագլխին վրայ։

—Հայ կաթոլիկ հասարակութեան Պատրիարք Գեր. Ազարեան նորաշէն Պատրիարքարանը վարձու տուեր է իտալական հիւպատոսին, և ինք երեք տարուան համար քովի տունը վարձեր է իբրև Պատրիարքական պաշտօնատուն։

—Լէվնթ Լէրըլտ կ'ըսէ թէ ինք Եգիպտոսէն նամակ մ'ստացած է, որ վերջին կարգադրութեան անկատարութիւնը կը ցուցնէր և ուրիշ բաներ կը նախատեսէր, որք արդէն իրականացած են և միւսներն ալ իրականալու ճանրուն մէջ են. բայց Տպագրական տեսչութիւնն հրամանն չտուաւ նորա հրատարակութեան։

—Կիրակի առաւօտ նախարարական խորհուրդ գումարեցաւ պալատն և Եգիպտոսի վերաբերեալ ամենակարևոր խնդիրներով զբաղեցաւ։—Ֆար տիւ Պոսֆոր, երէկ հեռագրաց բացակայութիւնն յիշելով, կ'ըսէ թէ մանաւոր հեռագրեր Եւրոպական նաւախմբոց շարժումներ կը ծանուցանեն, որք կը ցուցնեն թէ Միջերկրականի տերութեանց մէջ համաձայնութիւն գոյացած է բարեկարգութեան պահպանման համար։

— Ռուսիա կը պահանջէ Բ. Դրնէն որ Պուլկարիոյ տուրքն իրեն թողուի ի հաշիւ պատերազմական տուգանքին, որ դուրս թողուած է ելմտական վերջին կարգադրութենէն։

— Պաշտօնապէս կը ծանուցուի այսօր թէ ներքին կամ բռնի փոխառութեան ո՛չ և ս պէտք մնացած լինելով, կառավարութիւնը ջնջած է զայն, և ըստ այնմ հրամաններ ղրկուած են ելմտական պաշտօնատան։

—Միւնթէֆիգի ժողովուրդն, ըստ Թուրք լրագրաց, չնորհակալութեան արաբերէն հանրագիր մը ղրկեր են Բ. Դրան, այն կողմի խաղաղութեան վերահաստատման առթիւ։—Իզզէթ փաշա՝ ապստամբապետաց հողերն արգելքի ներքև դրած է, իբրև երաշխաւորութիւն այն ծանր տուգանաց զորս կը պահանջէ անոնցմէ։

—Թերճէմանը Հադիգաթ կ'իմանայ թէ Շիդագի Քուրդ ցեղը, Պարսիկներէն հարուածուելով, Օսմ. հողն ապաստաներ է, և թէ Մարտինի գաւառին մէջ բնակութեան համար պարապ տեղեր պիտի տրուին այդ ցեղին մարդոց։

— Էնկիւրիի գաւառին մէջ մարախներն ամբողջ հունձքը ջնջած և ժողովրդեան մէկ մեծ մասն յետին թշուառութեան մէջ թողած լինելով, կառավարութիւնը նպաստամատոյց յանձնախումբ մը կազմեց ընդ նախագահութեամբ Ապտիւր—Ռահման փաշայի, որ անդամ է հանրօգուտ շինութեանց նախարարութեան։

— Աւստրիական նաւատորմն Ալէքսանդրիոյ առջև գնացած է, և ընդհանրապէս կը կարծուի թէ վերջին դէպքերու հետ սերտ յարաբերութիւն ունի այս շարժումն։ Աւստրիական լրագիրը կը յայտարարեն թէ Աւստրիա հս չահ ունի Եգիպտոսի խաղաղութեան մէջ։

—Վանէն եկած տեղեկութիւնք կը ծանուցանեն, թէ քաղաքին բանտէն նշանաւոր եղեռնագործք խոյս տուած են, և թէ զանոնք ձերբակալելու համար տակաւին կարեւոր ջանքեր ի գործ դրուած չեն։ (Փոնջ.)

—Երզնկայի Զուգուր—մահալէ ըսուած թաղին մէջ, Տիրուհի անուն Հայ կին մը գիշերայն չարագործներէ յօշոտուեր ու սպանուեր, նոյնպէս Երզնկայի Մանթարա գիւղին մէջ Տ. Մկրտիչեան եղբարց վրայ յարձանումմ մը տեղի ունեցեր էր, և չարագործք ձերբակալուած չէին։ Բ. Դուռն այս անգամ Պատրիարքարանի կողմէ սոյն երկու անցից նկատմամբ մատուցեալ գրութեանց վրայ երկու հրամանագիր ղրկեր է առ ընդհանուր գատախազ տեղւոյն, այս չարագործութեանց հեղինակներն ձեր բակալելու և պատժելու համար։ (Նշ.)

— Սթամպուլ լրագիրն հետեւեալ անհաւատալի իրողութիւնը կը պատմէ, որ իբր թէ մայրաքաղաքիս քիչ հեռի գաւառի մը մէջ պատահած է եղեր տակէց երկու ամսոյ չափ առաջ։

Թուրքիացի վաճառական մը յիշեալ գաւառին գայմագամութիւններէն միոյն ստուկէն վճարուելիք 120000 ղրուշի հէվալէ մ'ուներալով, հոն կ'երթայ և հէվալէն գայմագամին ներկայացնելով քանի մ'օրէն ամբողջապէս կ'ստանայ 120,000 ղրուշը։

Մեկնելու պահուն գայմագամը վաճառականին երթալու ճանրան կը հարցնէ։ Նա ալ կը ծանուցանէ, ինչպէս նաև գիշերն անցուցելիք գիւղը։ Գայմագամը կը պատուիրէ վաճառականին որ գիւղէն մեկնած ժամանակ հետն երկու ոստիկան զինուոր առնու, վասն զի շրջակաները շատ ապահով չէին, և յանձնարարագիր մ'ալ կուտայ գիւղին Մուխթարին։

Վաճառականը գոհութեամբ կը բաժնուի գայմագամէն, ճանրայ կելնէ, և իրիկունը գիւղն հասնելով, սիրալիր ընդունելութիւն կը գտնէ Մուխթարէն, որ խանին լաւագոյն սենեակը բանալ կուտայ նմա և կերակուր կը ղրկէ։

Վաճառականը հոգնած լինելով կը պառկի։ Կէս գիշերուան միջոցները տարօրինակ դղրդիւն մը լսելով կ'արթննայ, և կը նայի որ սենեակին դուռը բռնաբարելու կ'աշխատուէր։ Կը հասկնայ դլխուն եկածն, և կամացուկ մը ելնելով դրամին պայուսակն և իւր հագուստները սենեկին դրանը կողման անկիւնը կը տանի կը դնէ, և ինք նորէն պառկելով, ռէվոլվէրը քովը դրած կ'սպասէ։ Վերջապէս դուռը կը բացուի, և մարդը կը տեսնէ լուսնի լուսով, որ երկու Արաբ ներս կը մտնեն, և դաշոյն ի ձեռին իւր վրայ գալով, դրամ կը պահանջեն։ Ուղեւորը կ'ուրանայ դրամ ունենալը, բայց յարձակողք 120,000 ղրուշ ունենալը յիշեցնելով՝ զինքը չարաչար սպաննել կ'ըսպառնան։

Այն ժամանակ մարդը սենեակին անկիւնը դրուած պայուսակը կը ցուցնէ։ Զարագործք հոն կը դիմեն, և երբոր պայուսակն առնու վրայ էին, ուղեւորը ռէվոլվէրը վերանին կը պարպէ չորս անգամ, և երկուքն ալ գետինը կը փռէ։

Աղմուկը լսուելով, մարդիկ կը հասնին, և երկու դիակները քննուելով՝ կը տեսնուի որ մին գայմագամն էր և միւսը մուհասէպէճին, որք չճանչուելու համար իրենց դէմքն ու ձեռները սեւով ներկած էին։

—Թունուզէն կը հեռագրեն առ Տէյլի Նիւս թէ Պէյը չհաճիր Թունուզ Ֆրանսացւոց որ գրաւեն զԹունուզ։

— Կը լսեմք թէ ասկից քանի մը ամիս առաջ Պուրկազի կղզին տունը կոխուելով բանտարկուած Զիվի օղլու Տիմոսթէն էֆէնտիին, և նորա մեղսակից համարեալ Իտալացի ճոնին հարցաքննութիւններն ուսարտելով, Աթէնքէն Տինամիթ բերած լինելու ամբաստանութեամբ յանցաւոր վճռուեր են Ամբասանութեան ատենի կողմէն, և ընդհանուր դատախազն ալ մշտնջենաւոր բերդարգելութեան պատիժ պահանջելով, դատն եղեռնադատ ատենին յանձնուեր է։ Զիվի Օղլուի կողմէն փաստաբան կարգուած է Սարաճեան Թորոս էֆէնտի և ճոնիի կողմէն ալ Խաչերեան Նազարէթ էֆէնտի։ Դատաստանն հրապարակային է։

— Նախընթաց գիշեր Գում-Գափուի մօտ Դատըրկա-Լիման թաղն հրդեհ պատահելով, երկու տուն այրեցաւ։

—Ֆերիքէօյի Վեր. Վրացի կըրօնաւորաց եկեղեցւոյն մէջ այս օրերս կատարուած հրաշագործութիւններն, որք Տիգրանեան Մկրտիչ սրբազանի սքանչելագործութեանց վրայ մուռացութեան ըստուեր ձգեցին։ Մինչև իսկ Փարիզի (անդրալեռնեայ) լրագրաց մէջ արձագանք կը գտնեն։

Ճիզվիթական Հռչակաւոր լ'Իւնիվէր լրագիրը Կ. Պոլսէն գրուած երկար նամակ մը հրատարակած է, որոյ մէջ Լուրտի ջուրին զօրութեամբ Ֆերիքէօյիվրացւոց եկեղեցւոյն մէջ կատարուած բժշկութեանց երկար շարք մը կը տեսնուի։

Օրինակի համար, օգոստոս 22ին երեք խելագար տարուեր են այդ եկեղեցին, և երկուքը բժշկուեր են։ Կաթոլիկ կին մը երեսուն տարիէ ի վեր քաղցկեղ ունի եղեր, զոր Կ. Պոլսոյ ամենէն ճարտար բժիշկները չեն կրցեր բուժել, այդ սքանչելի ջուրն երեք օր խմելով կատարելապէս բժշկուեր է։ Նոյնպէս հերետիկոս հայ կնոջ մը կուրացեալ աչերը բացուեր են, անդամալոյծ յիսնամեայ հրեայ կին մը չորս օր այդ ջուրը խմելով կատարելապէս բժշկուեր է։

Վերջապէս այս և ուրիշ բազմաթիւ հրաշալի բժշկութիւնք Վեր. Վրացի հարց համբաւը մեծցնելով, ամեն կողմէ նախանձոտ թշնամիներ յարուցեր են այդ բարի Ս. Հարց դէմ։

Նախ բժիշկներն, որոց հիւանդ ծուխերը հետզհետէ կը թողուն զիրենք և Լուրտի հրաշագործ ջուրին դիմելով, առանց ստակ մը վճարելու բժշկութիւն կը գտնեն։

Երկրորդ Ֆրանմասոններն, որք բոլորովին շփոթեր, ընելիքնին չեն գիտեր եղեր. վասն զի Ֆրանմասոններէն մին՝ վայրկենական բժշկութեան մ'ականատես լինելով ապշեր մնացեր է։

Երրորդն է Սթանպուլ լրագիրն, որ Վեր. Վրացի Ս. Հարց դէմ նողկալի թշնամանքներ ու զրպարտութիւններ կը հրատարակէ եղեր։

Չորրորդ և ամենէն ահաւոր թշնամիներն են Յոյն եկեղեցականք, որք եթէ ձեռուընուն գայ, մինչև իսկ ոճրագործութեան պիտի դիմեն եղեր Վեր. Վրացի Ս. Հարց հրաշագործութիւններն արգիլելու համար, որպէս զի իրենց ժողովուրդներն Այլազգիները թողով՝ Լուրտի Ս. Ջուրին չդիմեն։

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

—o—

Ս. Պատրիարք Հայրը կիրակի առաւօտ իսկիւտարու Ս. Խաչ եկեղեցին Ս. Պատարագ մատուցանելով՝ հոգևորապէս մխիթարեց թաղին Հայ ժողովուրդը։

Երէկ առաւօտ ալ դարձեալ նոյն եկեղեցւոյ մէջ Ն. Սրբազնութիւնը ծայրագոյն վարդապետութեան աստիճան տուաւ Արժ. Տ. Յովսէփ Այվազեան և Տ. Գաբրիէլ Ճէվահիրճեան վարդապետաց։

Ն. Սրբազնութիւնն երկու օրն ևս Պալեան Մեծ. Լեւոն պէյի տունն հիւրընկալեցաւ։

——

Միացեալ Ընկերութեանց Տընօրէն ժողովոյ Ատենապետ Տ. Մինաս Չերազ կիրակի օրն յատկապէս Նիկոմիդիա գնաց, Տնօրէն ժողովոյ պատրաստած ճիւղային կանոնագրին համեմատ մասնաճիւղեր կազմելու համար։ Մասնախումբին սիրայօժար անդամակցեցան։

Հոգեշնորհ Տ. Ստեփան Ծ. Վ. Յովակիմեան, փոխ-Առաջնորդ Նիկոմիդիոյ.

Մեծ. Աղասի էֆ. Աղասեան
» Խոսրով » Էսկիճեան
» Համբարձում Աթանասեան
» Յարութիւն » Պէյազեան։

Այս մասնախումբ ամբողջ Նիկոմիդիոյ գաւառին համար կեդրոնական լինելով, օժանդակ մասնախումբեր պիտի կազմէ գաւառին միւս Հայաբնակ վայրերուն մէջ։

Գոհութեամբ կը լսեմք թէ Նիկոմիդիոյ ազգասէր երիտասարդներէն ոմանք որոշած են իրենց դրոշածած ծխախոտէն աւելի ածան ծխախոտ մը գործածել այսու հետև, գնոյն տարբերութիւնը նուիրելով Միացեալ Ընկերութեանց։

Իսկ՝ թէ բոլորովին վերնար ծխելու (և արբենալու) ՀԱՍԱԿԱՐ սովորութիւնն, և Միացեալ Ընկերութեանց նուիրուէին այն հազարաւոր ոսկիներ, զորս ամեն տարի կը մսխէ Հայ ժողովուրդն . . . մուխի համար։

——

Լրագրոյս այս աւուր թուով կ'ըսկսինք հրատարակել ընտիր տեսութիւն մը զոր ղրկած է մեզ Պատ. Տ. Մարկոս Ազարէգեան, որ Հայաստանի Հայ ժողովրդեան նիւթական և բարոյական վիճակը կը քննէ. Միացեալ Ընկերութեանց ազգօգուտ գործին առթիւ։ Յօդուածագիրը քանիցս ուղևորած է Հայաստանի ամեն կողմն, և գործնական հմտութիւն ունի իւր ուսումնասիրութեան նիւթ ըրած խնդրոյն վրայ։ Իւր լուրջ գրութիւնն յատկապէս կը յանձնարարեմք ամեն անոնց ուշադրութեան, որք կ'զբաղին Հայաբնակ գաւառաց վիճակին բարւոքման խընդրովը։

——

Տ. Զարեհ Շիշմանեանի նամակը, որ տեղւոյ անձկութեան պատճառաւ այսօր չէ կրցած տպուիլ, վաղը պիտի հրատարակուի, հանդերձ մեր պատասխանով։

ԱԶԳԱՅԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԻՄ ՀԱՅԵԱՑՔԸ

Կ. ՊՕԼՍՈՅ ՀԱՅՈՅ ՄԻԱՅԵԱԼ ԿԱՄ ԴԱՍՏԻԱՐԱԿ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆՑ ՆՇԱՆԱԿՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ

Աւ. Նոպէլէ Սբբ-Հէ Տէրէն Աղէքսանդր Երէցեանց

Գանթիլի, 1881 սեպտ. 8

Իմ սիրական քոյր.

Դու խնդրեցիր ինձմէ, ՄԻԱՅԵԱԼ ԿԱՄ ԴԱՍՏԻԱՐԱԿ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆՑ նշանակութեանը վրայ իմ ի՛նչ հայեացք ունենալն իմանալ, Պարոնանց Գ. Նիկողոսեանի, Տօքտոր Փէշտիմալճիեանի, Յակոբ Զաքարեանի և Կարնոյ առաջնորդ Գեր Մաղաքիա վարդապետի՝ այդ Ընկերութեանց վերաբերութեամբ յայտ արած կարծիքների և առաջարկութեանց առթով։ Ահա՛ւասիկ այժմ, ես քո աչքի առաջն եմ բերում, իմ սիրական քոյր, այդ իմ հայեացքը, ոչ թէ միայն նոյն ընկերութեանց նշանակութեանը մասին, այլ և Հայաստանցոց ուսմունք, գիտութիւնք և արուեստք ստանալու պարաստականութեան մասին։ Ես՝ այդ ընկերութեանց հետ ոչ մի յարաբերութիւն չունիմ, թէ և դրանց անդամների մէջ, շատ շնորհալի անձինքների բարեկամութիւն վայելում եմ։ Բայց, քեզ քաջ յայտնի է որ՝ ես Հայաստանցոց կեանքը մի քանի անգամ մօտանց տեսել եմ ու քննել։ Սակայն և այնպէս խնդրում եմ յատուկ քեզմէ, որ իմ գրուածքի թերութեանց նեղողամիտ լինիս, վասն զի գիտես որ՝ մի տարուց աւելի հիւանդութիւնով տանջուող մի մարդ, դրամէն աւելի, թէև կամք էլ ունենայ, մի ընաիր բան չէ կարող դուրս բերել իրամէն, մանաւանդ մի այդպիսի խնդրի մասին, որ բաւական սրտապնդութեան է կարօտ։

Մնամ քո քուրական սիրով մինթ արուղ

ՄԱՐԿՈՍ ԱՂԱԲԷԳԵԱՆ

«Եւ ի՞նչ են, Հայր պատուական, «Հայոց ազգայնութիւն, վարչու«թիւն և իրանց նշանակութիւն տե«սութեան առաջ, օտար ազգաց «առաջ և որ մեծն է Եւրոպացոց «առաջ, առանց Հայաստանի Հա«յոց վերակենդանութեան և զար«գացման։ Եթէ այս տեղ Հայ«կական տարերքը սպառի, եթէ «այստեղ Հայոց մէջ կեանք, առու«տուր և կենդանութիւն չլինի, «մնան բարով Հայոց Պատրիարքու«թիւն, Սահմանադրութիւն և Կա«թողիկոսութիւն....։ Ուրեմն ի՞նչ «է մեր գործ և պաշտօն։ Պօլսում «միմիայն մեր կեա՞նքը հոգալ ու «ապահովել և Հայաստանցոցը վրայ «անհոգ ու անտարբեր մնալ։ ո«րոնցմո՞վ ենք մենք ազգ այսօր «աշխարհում։ Այնպէս գիտենաս, «Տէր Հայր, և քեզ հետ թող մեր «Պօլսեցիքս էլ գիտենան, որ մենք «առանց Հայաստանցուն ոչ ինչ «ենք, դրանց ապագայն մերինն է, «դրանց ղօրութիւն և կենդանու«թիւն մեր ապրելութիւնն է ու «նեցուկը, դրանց համար աշխա«տելով մեզ համար կը լինինք աշ«խատած, դրանց ապագայն պատ«րաստելով մերինը կը լինինք պատ«րաստած...։

1877 թուին Հայաստանամ՝ ման եկող մի ճամբորդի նամակին խաղատ։

«Ա՛խ, Տէր Հայր, Հայաստանում «կայ ո՛չ ընկերական կեանք, ցաւ«ալով եմ ասում, և ընտանեկան «կեանք։ Հայաստանցին դեռ մատ«ղաշ պատանի՝ ամուսնանում է ի«րա պէս մի մատղաշ կուսի հետ և «այդ կոյս՝ լինում է բերանը կապ«կրպոտած մի անխօսուն կենդանի, «զաւակունք ծնում են... հայրն «իր զաւակունքն ոչ դգում է և «ոչ խստում։ Հայր, մայր, որդիք «թոռունք սեղանակից չեն լինում «իրար հետ, տարիներով բերան ու «երես են պահում իրարու, կին և «աղջիկ դատապարտուած են տանը «մութ և անդարդ խցերում փակ«ուիլ...» Նմանապէս

«... Եւ եթէ այս դարումս «մեր մէջ առաջ եկած հոգեկան «և մտաւոր զօրութիւնքն էլ Հա«յաստանում ունենային իրանց «գործունէութիւնքը... փոխանակ «անարդիւն գործունէութեան մէջ «սպառուելու կամ անօգուտ աշխա«տութեանց համար փճանալու, Հա«յոց աշխարհը կարող էինք Արև«մըտեան Ասիում դրախտ շինել, «Հայոց ազգին էլ դրախտաբնակ «մի ժողովուրդ։»

Տե՛ս էմ Թո՛ղթ Հայոց Աշխ. Աղբ. Լեկեղ. ազգայնութեան մասին, երես 160, Տպագր. Աբուդեան 1875 Կ. Պոլիս։

Առ հասարակ հաստատուած սովորութիւն է որ՝ երբ մարդիկ հիւանդանում են, բժիշկներին են դիմում իրանց հիւանդութեան դեղ դարման գտնելու և իրանց առողջութեան համար էլ խորհուրդ հարցնելու։ Բժիշկներն էլ այն ժամանակ տեսնում են ու քննում մարդկանց հիւանդութիւնքը։ Եթէ ճանաչում են դրանց ի՛նչ տեսակ լինիլն և դրանց դեղն ու դարման էլ իմանում, իսկոյն և եթ մատակարարում են դրանց, միևնոյն ժամանակ պէտք եղած խորհուրդներն էլ տալով նրանց առողջութեան մասին։ Շուռ տո՛ւր այժմ այդ սովորութիւն, իմ սիրական քոյր, և այնպէս արա՛ որ, փոխանակ մարդիկ դիմելու բժիշկներին, բժիշկները լինէին դիմում նրանց իրանց առողջութեան ժամանակ և առանց քննելու և ճանաչելու նրանց ցաւկամ հիւանդութիւն, մէկին ասում լինէին թէ դո՛ւ այս տկարութիւնն ունիս, մէկէլին էլ թէ դու այն ցաւ, իսկ միւսին էլ թէ դու այս դժուարութիւն պէտք է որ անես և այլն։ Ի՞նչ արարածներ եղած կը լինէին, այդ շուռ տուած սովորութեան համաձայն բժիշկները։ անտանելի հոգեհաններ իրանց դեղերով, խոյս տալու դլխացաւեր իրանց խորհրդներովը։

Միացեալ կամ դաստիարակ ընկերութեանց դլխին էլ, ճիշդ այդ դեղերին ու խորհրդներին են դիմանում։ Միայն Գեր. Մաղաքիա վարդապետը, դաստիարակ ընկերութեանց բռնելու ընթացքում տեսնուեց, որ նա իրողութիւնը մօտանց տեսել է ու քննել և ապա այդ մասին իր հայեացքն էլ յայտնել է։ Ես կասեմ և կարծեմ ինձ հետ շատերն էլ որ Մաղաքիա վարդապետին են ճանաչում, ինձպէս կը վկայեն թէ նա այսօր մեր ազգումն՝ եկեղեցականացմէ մին է որ շատ լաւ կարող է մի ուղիղ հայեացք ունենալ դաստիարակ ընկերութեանց գործունէութեան վրայ Հայաստանում։

Այդ ամենքէն յետոյ, ես եմ երևան գալի ասպարիզում դաստիարակ ընկերութեանց վրայ խօսելու։ «խօսելու» եմ ասում և ոչ նրանց ուղղելու կամ հրահանգելու և իրանց գործունէութեան մի ուրիշ նպատակ ցոյց տալու։ Բայց նախ բացատրեմ՝ թէ, ի՞նչ իրաւունքով եմ խօսելու այդ ընկերութեանց վրայ, երբ սրա ու նրա խօսելուն հաւան չեմ կենում, սրա ու նրա ուղղութիւն տալը դրանց, ինքնեկ բժիշկների առանց քննելու և ճանաչելու մարդկանց ցաւերը՝ տուած դեղերին ու խորհրդներին են նմանում։ Միայն Գեր. Մաղաքիա վարդապետը, դաստիարակ ընկերութեանց բռնելու ընթացքում տեսնուեց, որ նա իրողութիւնը մօտանց տեսել է ու քննել և ապա այդ մասին իր հայեացքն էլ յայտնել է։ Ես կասեմ և կարծեմ ինձ հետ շատերն էլ որ Մաղաքիա վարդապետին են ճանաչում, ինձպէս կը վկայեն թէ նա այսօր մեր ազգումն՝ եկեղեցականացմէ մին է որ շատ լաւ կարող է մի ուղիղ հայեացք ունենալ դաստիարակ ընկերութեանց գործունէութեան վրայ Հայաստանում։

Ամենքէն յետոյ, ես եմ դաստիարակ ընկերութեանց գործունէութիւնը։

Ըստ ինձ, իմ սիրական քոյր, բոլոր այդ պարոնանց տուած հրահանգները, ուղղութիւնքը և առաջարկութիւնքը դաստիարակ ընկերութեանց, ճիշտ ինքնեկ բժիշկների առանց քննելու և ճանաչելու մարդկանց ցաւերը՝ տուած դեղերին ու խորհրդներին են նմանում։ Միայն Գեր. Մաղաքիա վարդապետը, դաստիարակ ընկերութեանց ընթացքն՝ իրանց նպատակին մէջ։ Վերջն ու վերջը, այս օրերումս էլ տեսանք, նոյնպէս Մասիսում, Յակոբ Զաքարեան անունով մի երէց ուսանող Մերլինի երկրագործական վարժարանին և անդամ Պարիզի Հայկազեան Ուսումնասիրաց ընկերութեան. Հարկը հարկն ելա՞ծ է, ըէ հարը հարկերին, ասմունքն բնաբան դնելով իր բանախօսական գրուածքին, երկար բարակ հրահանգ հրահանգի վրայ տուող դաստիարակ ընկերութեանց, նրա փաստաբան երեսփոխանին դլխին էլ տալով երեսին էլ իրանց դաստիարակ ընկերութեանց գործունէութիւնը։

Ըստ ինձ, իմ սիրական քոյր, բոլոր այդ պարոնանց տուած հրահանգները, ուղղութիւնքը և առաջարկութիւնքը

նալ, դրան՝ իր երկրին հետ ունեցած յարումն ու սէրը քննել ու իմանալ, դրան՝ իր օրական ու տարեկան աշխատութեան մէջ ճանաչել, դրան՝ իր սնանելումի, հագուելումի և կաց ու նիստ անելումը նըկատել, դրան՝ իր ընտանեկան և ընկերական կեանք վարելումի ճանաչել, դրան՝ ազգասիրութեան և կրօնասիրութեան ո՛ր աստիճանում լինելն իմանալ, դրան՝ ինչպէս չար սովորութիւնքը և մոլի միտումները, նոյնպէս և բարի սովորութիւնքը ու լաւ յատկութիւնքը նկատուլթեան առնել, դրան՝ իր յարաբերութեանց մէջ իր կանանց հետ և նրանց տուած նշանակութեան ի՛նչ տեսակ լինելը ըմբռնել, և զըլուխ ամենեցուն, այդ ազգի կամ ժողովրդի կեանքը, մի խօսքով, ի՛նչ նպատակ և ի՛նչ վախճան ունենալը վերահասու լինել։

(Շարունակութիւնը վաղը։)

ՄԱՐԿՈՍ ԱՂԱԲԵԳԵԱՆ

ՀԱՅՔ Ի ՉԻՆԱՍՏԱՆ

(Շար. Ա. վերջ)

Ինչպէս ըսի, Հոնկգոնկի բնակչաց մեծագոյն մասը Զինէացիք են. Ճաբօնացիք խիստ հազուագիւտ են. միայն Հոնկգոնկ մի քանի Ճաբօնացի կանայք տեսած ունիմ, որոնք խիստ և աւելի գեղեցկադէմ են. Ճաբօնացի կանանց և փափկասուն օրիորդաց բնական յատկութիւններին է գոյնով ճերմակ, երեսով խիստ գեղեցիկ և կլորակ, և մազով փայլուն սև և խիստ երկայն. Ճաբօնացի կանանց և օրիորդաց հագուստը շատ սիրուն և միանգամայն խիստ թանկագին է, և բոլորովին տարբեր յերոպացւոց, իսկ Զինէացի կանանց և օրիորդացը խիստ պարզ է. լայն վարտիք մը և մինչև կէս մէջքերնին վերարկու մը՝ համեստօրէն կուրծքերնին գոց. ըսյց հակառակ այս համեստ հագուստին՝ իրենք չափազանց վաւաշոտ են. հագուստներնուն (Զինէացւոց) նիւթը պարզ մատամբոլ է կամ սեւ, կամ կապույտ, կամ ճերմակ, սակայն Ճաբօնցի կանանց չորերն իրենց ընտիր և հիանալի նիւթերէն է. այս երկու ազգաց թէ կանայք և թէ արք, թէ կռապաշտ և թէ քրիստոնեայ, չը տեսայ տակաւին մին որ Եւրոպացւոց չոր հագնէր. Զինէացի երիկ մարդոց չորերն ևս ճերմակ մատամբոլ է. գլուխնին բաց. և յօնքերէն ու թարթիչներէն զատ ամէն մազերէն կ'ածիլեն, բացի այն կլորակ ծամէն, զոր ամէն Զինէացի պարտի ունենալ գլխուն գագաթը. Զինէացի ոմն մինչև վաթսուն տարեկան արտօնութիւն չունի մորուք կամ պեղ ունենալ. իսկ վաթսունէն զկնի իւր կամաց յանձնուած է. մեծ փոյթ կը տանին ականջ մաքրելու. դանդաղ բարակ գործիքներով և վըրձինով ականջաց մինչև խըզունջը կը մաքրեն. իրենց մէջ մեծ պատիւ է երկար ըզունգ ունենալ այնպիսի ըզունգներ ունեցող կան, որոնց մէկ ազատ մասը 3 հարիւրամեթր երկայնութիւն ունին։ Հոնկգոնկ, Սինկարօր, ինչպէս նաև Հնդկաստան սափրիչները ըզունգ կը կտրեն թէ ձեռքի և թէ ոտքի. Զինէացի կանանց ոտքի փոքրութիւնն երբ իմանաս, անշուշտ դժուարաւ պիտի հաւատաս եթէ ըսեմ թէ մեծ և չափահաս կանանց ոտքը հազիւ հազ 7 հարիւրամեթր կայ. ոտքի այս տարօրինակ փոքրութիւնն արուեստական է և յարգի իրենց մէջ. բայց դժբաղդութիւնն այն է որ այսպիսի ոտք ունեցողները խիստ դժուարաւ և կաղն ի կաղ կը քալեն։ Զինէացի կանայք մազերն ևս մեծ խնամով կը զարդարեն և իւղով կ'օծեն ամէն առաւօտ. ասոնց մազերուն զարդարանքը տեսակ տեսակ ձևեր ունին. ընդհանրապէս հովահարի ձևով կը զարդարեն և գիշերները մազերնին չ'աւրուելու համար կիճէ և ուրիշ կարծր նիւթերէ շինուած փոքրիկ բարձի մը վրայ կը պառկին. երեւակայէ, բարեկամս, հաստ ժամագիրք մը, որուն լայն եզերքը՝ փոքր ինչ բացուած՝ գետնի վրայ դնես, և ահա քեզ Զինէացի կանանց բարձը՝ որուն վրայ այնպէս անուշիկ կը քնեն՝ որ դուն կակուղ անկողնոյդ մէջ կարող չես այն քաղցրութեամբ քնել. իսկ Ճաբօնացի կանանց մազերուն հիւսուածքը և ձևը Եւրոպացւոց կը համեմատի։ Այս երկու Ասիական ազգաց համար ներկայ նամակաւս այսքանս բաւ համարելով, անցնիմ քիչ մը ևս Հոնկգոնկի փոքրաթիւ Հայոց նկարագրութեան, խոստանալով միանգամայն եւս որ յետ այսորիկ ևս իմ քեզ գրելիք նամակաց մի մասն սոյն տեսակ հետաքրքրական և զուարճալի նիւթոց նուիրեմ։

Պ. Աստուածատուր Խ Պ. առաջին կարգի հարուստ կալուածատէր. սա թէ կառավարութեան և թէ տեղւոյն առհասարակ ժողովրդեան առջև մեծ յարգ և պատիւ ունի. տեղւոյս Մասոնական գլխաւոր օթեակին նախագահն է. այս ազնիւ Պարոնը ժամանակին մեծ օգնութիւններ և հիւրընկալութիւններ կ'ընէ եղեր Հոնկգոնկ գնացող պանդուխտ Հայոց, ըսել կուզեմ . . . բայց այս . . . մարդիկը մի կողմանէ նորա առատաձեռն հիւրասիրութիւնն վայելելով՝ միւս կողմանէ կ'սկսին բամբասել այսպիսի բարեսիրա անձը. Պ. Ա. Խ. Պ. առ այս քանիցս համբերելով՝ վերջապէս ճարահատեալ որոշեր է այլ ևս այնպիսի . . . պանդուխտ հայերը չընդունիլ։

Պ. Պ. Յորդանան, պատուական և ազնիւ պարոն մ'է. «Հոնկգոնկ է Շանկայի» անուն մեծ դրամատան մէջ կարեւոր պաշտօն ունի, և բաւական ատեն Եւրոպա մնացած է։

Պ. Յ. Սէթ Ա. Սեթեանց, ընտիր և ազնուահոգի Հայ Պարոն մը, իւր պաշտօնն էր տեղւոյն Ա. Ատենի դատաւորին Ա. Ատենադպիրը. իւր ատենադպրութեան հեռաձիանգամայն խորհրդականի պաշտօն կը կատարէր. դատաւորի գրասեղանին վրայ արձանագրուած վճիռները՝ նախապէս Պ. Յ. Սէթի ձեռքը կը հասնին. սա իրաւասութիւն ունի առանց դատաւորին հարցնելու ջնջել կամ փոխել այն վճիռները՝ որոնք օրինաց տրամադրութեան համեմատ չեն. քանիցս ականատես եղած եմ որ դատաւորը Պ. Յ. Սէթի սենեակը գալով խորհուրդ կը հարցնէր նորա թէ այս ինչ յանցանքի համար կարո՞ղ է այս ինչ վճիռը տալ. և վերջերս իւր պաշտօնն բարձրանալով, Տեղւոյն ընդհանուր կառավարչին ատենադպրութեան պաշտօնն յանձնուեցաւ, որ քան զառաջինն խիստ բարձր է, սոյն պարոնը ամուսնացած է իւր հօրեղբօր դստեր հետ։ Պ. Յ. Սէթ, ինչպէս ուրիշ երեւելի Հայ պարոնայք խիստ վատ կարծիք ունին թէ Թուրքիոյ . . . և թէ թիւրքիարնակ Հայոց մասին։ Պ. Յ. Սէթ նաև անդամ է տեղւոյս Մասոնիկ խմբին, և չորս պատուանշան ըստացած ունի Մասոնական ժողովքէն, յորոց մին ոսկի է ճաճանչաւոր և միանգամայն թանկագին։ Սոյն հազուագիւտ պարոնի արժանայիշատակ հանգուցեալ հայրն Պ. Ս. Ա. Սէթեանց ևս խիստ բարձր պաշտօններ ունեցեր է Մասոնիկ խմբին մէջ. այս բարեյիշատակ անձին ազգասիրութիւնն ու հեզահոգութիւնն ևս խիստ նշանաւոր է. և արդէն Սինկարօրայ Ս. Գրիգոր Լուսաւորչի եկեղեցւոյ մէջ վիմագիր արձանագրութիւնք կան՝ թէ՛ հանգուցելոյն և թէ՛ որդոյ նըմանեաց յիշատակին նուիրեալ։

Պ. Ա. Մ. Աբգար. այս պարոնն ևս մարդասիրական և սրտի ազնուութեան կողմանէ Պ. Յ. Սէթին կը հաւասարի, ինք մեծ համարում և վարկ ստացած է մանաւանդ Զինէացի վաճառականաց մօտ։

Պ. Հայկազունի, բարեսիրտ և ազնիւ հոգւոյ տէր պարոն մ'է, և պատուաւոր վաճառական, որ միանգամայն յանձնարարութիւններ կ'ընդունի։

Բալեկամս, ահա այս վերոյիշեալ ազնիւ պարոնայք են Հոնկգոնկի մնայուն պատուարժան և բարեսիրտ հայերը, իսկ մնացեալներն առաւուրի պատճառաւ առ ժամանակեայ կը մնան։

Բինանկ, Հոնկգոնգի նման ունի սարեր, քաղաքը չինուած է ծովեզրին վերայ սարերուն ստորոտը։ Այս տեղ միայն կը պատրաստուի Հնդկընկոյզի իւղը, որ հանրածանօթ Հայ ընտանիքի մը գիւտն է, այն է Անտոնեան բարեհռչակ ընտանիքը. այս ընտանեաց բարի համբաւը ծանօթ է Հնդկաստանի ամեն կողման թէ Հայոց և թէ օտարազգեաց. Բինանկի մէջ միայն այս ընտանիքը կայ Հայ. ուրիշ Հայ չըկայ բնաւ այս տեղ. ժամանակին շատ Հայ տուներ կան եղեր այս տեղ, որոնք վաճառականութեան մէջ մեծ համբաւ ստացեր են, այժմնոցա յիշատակը տապանաքարերուն վրայ միայն կը տեսնուի. ունինք եկեղեցի մը յանուն Սըրբոյն Լուսաւորչին, աւելի մեծ քան զՍինկարօրին. վիճակաւոր քահանայ մի կայ նոր եկած ծերունի՝ Տէր Յակոբ Տէր Հայրապետեան, որ ինչպէս յայտնի է մի միայն Անտոնեան ընտանեաց հոգևոր մատակարարութեանը սահմանեալ է։ Այս՝ արժանաւոր ընտանիքն ունի քանի զաւակներ, որոնք թէ՛ Բինանկ և թէ այլուր վաճառականութեամբ կը զբաղին, Արգար և ընկերութեան շոգենաւերուն Բինանկի գործակատարութիւնն այս ընտանեաց որդւոց մին կը կատարէ. բնակութիւնին քաղաքէն կէս ժամու հեռաւորութեամբ՝ ընդարձակ պարտիզի մէջ է, ինքը ըսքանչելի և խիստ գեղեցիկ ապարանք մ'ունին. Պ. Անտոնեան վերջի ատեներս վախճանած լինելով, իւր բարի ամուսինն, Մէրէմջան խանում, կը կառավարէ այժմ ընտանեկան միութիւնն։

Թուրքիարնակ Հայոց բարբառն ևս այս կողմերանց Հայոց անհասկանալի է, ինչպէս Սովելոց Ցանձնաժողովը կընէր այս կողմերը զրկուած գրերուն մէջ, որոնց միայն ոչ միայն նոցա՝ այլ և Թուրքիարնակ Հայու մ'անգամ անհասկանալի են . . . ։

Հնոկգոնկի վրայ խօսելուս՝ մոռացայ քեզ ասել որ Հոնկգոնկ ընտիր և այլ ձև թքամաններ կան, որոնք սրահներու մէջ որոշեալ տեղեր կը դնեն գետնի վրայ որ թուք ունեցողը մէջը թքընէ, և թքնելէդ զկնի չես կարող թուքդ տեսնել։ Արժանայիշատակ Մեսրոպ Դաւթեան թաղիթեանց խմբագիր Ազգասէր անուն լրագրոյ ի Կալկաթա երբ Էջմիածին կերթայ հանգուցեալ Աչտարակեցի Ներսէս Կաթողիկոսի նախորդին ժամանակ, այն նպատակաւ որ որ և իցէ պաշտօն մը գտնայ երջանիկ ապրելու, ինքզինքը առանց յայտնելու գաղտ կը մտնէ Վեհարանը և կը տեսնէ որ Կաթողիկոսի դիւանին վրայ այս թքամաններէն մի հատ դրուած է վըրան քանի մը փետուր գրիչներով, անմիջապէս գրիչ ու թուղթ դառնէ և սա հեռաւոր ոտանաւորը կը գրէ և նոյն ժամայն կը թողու Էջմիածինն, ոտանաւորի թուղթը թքամանին վրայ փակցուցած.

Երբ թքաման թանաքաման
Դարձեալ՝ տեսի ես Վեհարան,
Զի՞նչ քեզ այլ յոյս երջանկութեան,
Փախիր չուտով Մեսրոպ Թաղիեան։

ԱՅՆԹԱՊ

Այն կարեւորութիւնը զոր ունի Այնթապ, թէ՛ իբրև վաճառաշահ քաղաք, թէ՛ իբրև կիլիկիոյ բաղմահայ տեղերէն մին և թէ՛ իբրև ասպարէզ օտար եկեղեցեաց մըրցման, պարտ էր ցարդ բազմիցս գըրաւեր Հայ հասարակութեան, մանաւանդ Կ. Պոլսոյ վարչական և կրթական մարմնոց կատարեալ ուշադրութիւնն։

Յաւալի է որ տեղւոյս Հայութիւնն ալ մինչև ցայսօր շօշափելի արթնութիւն մը ցուցած չէ և մշտատև թմրութեան քողոյն տակ ծածկուած մնացած է։

Ինչ որ ալ ըլլայ, անցելոյն վրայ ծածկոյթ մը թողլով՝ ներկայիս անյապաղ հարկ է ձեռնարկել Այնթապի բարոյական վերակենդանութեան։ Աբգարև կը յիշեմ անցեալ տարի «Հայրենիքի մէջ Պ. Խ. Յարաճի տեսութիւնն և Մանդումէի մէջ անստորագիր նամակ մը, որք գրեթէ մի և նոյն ժամանակ կը ներկայացնէին Այնթապի Ազգային անհանգիստ դրութիւնն և հրաւէր կը կարդային անդանդաղ դործելու։ Նմանապէս այս տարի Զեր Մասեաց մէջ վահան ստորագրութեամբ նամակ մը աւելի բացորոշ կերպիւ կը պարզէր Այնթապի կըրթական ամենախեղճ վիճակն. սոցա և ո՛չ մին կարեւորութիւն դտաւ։ Ես ալ այժմ ահ ու դողի մէջ գրիչս ձեռք կ'առնում. չեմ գիտեր թէ գրութիւնս ի՛նչ ընդունելութիւն պիտի գտնէ. սակայն ինչ որ ալ ըլլայ, ճշմարտութիւնն ազատ է և գոնէ ապագայն զիս կ'արդարացնէ այս «հրաւէր»ի համար։

Կ'սկսիմ համառօտիւ ներկայացընել Այնթապի Ազգ. կացութիւնն և կը հրաւիրեմ ամեն Հայու, մանաւանդ Ս. Պատրիարքին և Մեծագեալ ընկերութեանց ուշադրութիւնն։ Երանի՜ թէ ի դերև չելներ իմ յոյսս ալ։

Քաղաքիս բնակչաց թիւը 40 հազարէ աւելի կը հաշուեն. Հայք 10,000 հոգի են գրեթէ, որոց 7500 ն Լուսաւորչական՝ իսկ մնացեալն Բողոքական, Եպիսկոպոսական և Պապական են։ Հայք թըրքախօս են, և Լուսաւորչական եկեղեցիէն դուրս գտնուող Հայոց վրայ ազգային նշան մը գտնել դըժուար բան է։ Գիտնալ պէտք է որ քաղաքիս վաճառականութիւնն և արհեստք մեծագոյն մասամբ Հայոց ձեռքն են. սակայն ներկրագործ և պարտիզպան Հայ մ'ալ գտնել դիւրին չէ։

Հայոց զբաղմանց վրայ աւելի գրել չէ նպատակս, ուստի օտարակըրօն Հայոց վրայ քիչ մը խօսիլ հարկաւոր է։ Պապականք անշան թիւ մ'ունին, սակայն ստոյգ աղբիւրներէ կը լսուի թէ ցիսուսեան կրօնաւորք մօտ օրերս Հալէպէն հոս պիտի գան՝ Պապականութիւնը տարածելու։ Նոցա յատկացեալ գումարն տարեկան 40,000 ֆրանք է եղեր։ Եպիսկոպոսականք ևս անընշան են. յայտնի է թէ սոյն ժողովուրդը գլխաւորաբար քաղաքիս նախկին առաջնորդ և Սոյն աթոռոյն երբեմն տեղապահ Մկրտիչ եպիսկոպոսի ջանիւք ծագումն առած է։ Սոյն անձը քանիցս յԱնգլիա դիմեց և դրամական նպաստ բերաւ, որով այժմ եկեղեցի մը կը կառուցանէ։ Կ'երեւայ թէ սոյն ձեռնարկը Անգլիոյ մէջ կարեւորութիւն գտած է. նոքա զայս կ'անուանեն «Բարեկարգութիւն Հայաստանեայց եկեղեցւոյն մէջ»։ Բողոքականք աւելի բազմաթիւ, աւելի հաստատմամբ և աւելի յառաջադէմ են. երեք եկեղեցի, երեք նախակրթարան, ուսումնարան (գօլէճ), աղջկանց երկսեռ վարժարան. հիւանդանոց և որբանոց ունին։ Թերեւս քիչ օրէ ունենան նաև աղջկանց ուսումնարան, տպարան և լրագիր։ Ցայտնի է սակայն թէ, սոքա թէ՛ ոսկին, թէ՛ կրթութեան մեթոտ, թէ՛ զգացումի, մեծաւ մասամբ Ամերիկայէն կ'ստանան։ Այս հանդերձ պէտք է խոստովանիլ թէ Բողոքական ծնողք լաւ գիտեն զաւակաց կրթութեան համար ծախսել։ Կարի ցաւալի է որ Լուսաւորչական Հայք չունին նշանաւոր և դովելի բան մը։ Ազգային գործոց վարչութիւնն անուանապէս Թաղական ըսուած խորհրդոյ մը ձեռքն է, սակայն իրապէս մի անհատի։ Այս անհատն ամեն ազգային խնդիր անօրինելու և գործադրելու արտօնութիւնն ունի։ Թաղական խորհրդոյ անդամք՝ քիչ բացառութեամբ՝ տգէտ և անկարող անձեր են. թէև սահմանադրաբար ընտրեալ . . . ։ Քահանայից դասն ալ անշան բացառութեամբ անուս, անկիրթ, անզգայ և խեղճ արարածներէ կը բաղկանայ։ Սոյն դասը կը պարունակէ այնպիսի հըրաշակերտներ՝ որք «աշխարհ»ը «ոչխար», «եղիա»ն «եղիտ», «խըռովեցաւ»ը «խորովեցաւ» և այլն կը կարդան Ս. բեմին վրայէն, որք պսակ կը կատարեն և կը քակեն ևս «թէրս պսակով», որք՝ «հաւատք, յոյս, սէր» ըսելէ յետոյ ի՛նչ ասելիքնին չեն գիտեր, որք խեղճ, աղքատ պանդուխտները գիշեր մը եկեղեցւոյ բակին մէջ պառկելու չեն թողուր, և պատճառ կ'ըլլան խեղճ թշուառներուն պատուոյ անարգում կրելու, որք տասն անգամ ուխտադրժութենէ վերջ տակաւին գինով կը պտըտին, որք մէկ փարան պակաս չառնելու համար կռիւ կ'ընեն, որք «թանգարանը «տանկալազ» (ապուշ, յիմար) կ'անուանեն, որք վերջապէս Պատրիարքական հրամանի համեմատ տեղական ազգային լուրերը հաղորդելու կ'ընդդիմանան և կառավարութեան եարմըղանն կը ծախեն . . . ։

Ահա, Հայե՛ր, ահա սոքա են Այնթապի պէս մի քաղաքի մէջ Հայաստանեայց կղերի ներկայացուցիչքն։ Մինչդեռ օտար որսորդ–հովիւք չանի կուրծ կ'աշխատին մեր եկեղեցիէն անդամ մ'ալ պակսեցնելու, սոքա՞ չեն հոգար թէ այսինչը ինչո՞ւ Բողոքական կամ Եպիսկոպոսական կ'ըլլայ, որովհետև աղքատին երեսը տեսնել չեն ուզեր, նորա թաղման և մկրտութեան խորհուրդն այնչափ արագ կը կատարուի՝ որ կարծեմ Աստուած անգամ չհասկնար որ մըտիկ ընէ։

Բաւական է ինչ որ գրեցի քահանայից վրայ. թէև խիստ կը թըուի, սակայն մեծ պաշտօնեայք մեծապէս պատասխանատու են. և այս բոլոր տողերն ճշմարիտ են. և «ճշմարտութիւնը խիստ է» կ'ըսէ Ցէէրլոն։ Կ'անցնիմ յիշելու վարժարանքն ալ, ահագի՛ն տարբերութիւն բողոքականաց վարժարանաց և մերիններուն մէջ, արդէն բազմաթիւ Հայ պատանիք և պատանուհիք նոցա դպրոցաց մէջ կը կրթուին։

Մեր գլխաւոր վարժարանն «Ներսիսեան» կը կոչուի, 3-4 տարի յառաջ 450–500 ուսանող ունի եղեր. այժմ հազիւ 280, ոչ ոք գոհ է սոյն վարժարանէն։ Նախակրթարանէ և ընտրելարանէ կը բաղկանայ։

Աղջկանց «Հայկանոյշ» վարժարանը 100 աշակերտուհի ունի, ցարդ բաւական արդիւնք ցուցուց, սակայն վարժուհին հրաժարած ըլլալուն, յայտնի է ապագայ վիճակն։ Կան մի քանի մասնաւոր ծաղկոցներ, լաւ ևս խամրոցներ, կրոր հաշիւ մ'ընելով՝ վարժարանաց վրայ ալ գրածս բաւական պիտի համարիմ։ 1500–2000 բողոքականաց ուսանողաց թիւն աւելի է քան 7500–8000 լուսաւորչականաց։

Այժմ Այնթապի օրուան մեծ խնդիրն եկեղեցւոյ շինութիւնն է, որոյ համար 10000 լիրա ծախք պիտի ըլլայ կ'ըսեն, մինչդեռ եկեղեցւոյ կից կիսկատար շէնք մը կայ զոր վարդանանց ընկերութիւնն շինել տուած է։ Ժողովուրդը նիւթական օգնութիւն չըներ սոյն վարժարանի շէնքին կատարման համար. եկեղեցւոյ քառորդ մասն լրացած է։ Վարդանանց ընկերութեան մասին գրելու համար՝ նամակս երկարեցաւ, ուրիշ առթի կը թողում, ինչպէս ուրիշ խնդիրներ ալ։

Այնթապի Հայ ժողովուրդը կարող է կրթական ծախքեր ընելու, սակայն ամենահարուստն անգամ 5 փարա տալու կը դժկամակի. մինչդեռ զուարճութեանց և հաճոյից համար քսակն առատապէս կը բանայ։

ՈՒՂԵՒՈՐ ԿԻԼԻԿԻՈՑ

Ց. Գ. Թերևս անօգուտ չէ յիշել թէ քանի մը շաբաթ առաջ մեկնեցան քաղաքէս երկու Ֆրանսացի հնախոյզք, Պ. Պ. Մարմիէ և Ազար, որք Ասորեստան պիտի շարունակեն իրենց խուզարկութիւնն։ ՆՈՑՆ

ՎԱՐԺԱՊԵՏԱԿԱՆ ԳԼԻԽՊ

1. Վարժապետական գլխապին նպատակն է՝ աշխատիլ բարձրացը-

այլ և ոչ մենք։ Դարձեալ յայտնի ճշմարտութիւն մըն է որ ոչ Հայ և ոչ Թուրք լեզուները նախադասմանիկ հոլովակերտ չեն ճանչնար(5)։

Ա՛հել բայն, որ չենք գիտեր ո՛ւր գտնուած է, կը զարմանանք թէ ի՛նչ կերպով կը միանայ «այել բային հետ, զոր՝ որպէս զի կարենայ «ի՛ն հետ միաբանել, աղաւաղեալ կը համարի։ Նմանապէս «–«ել բայն, (արաքել է եղեր ուղղագրութիւնը) որ վերոյիշեալ «ի՛ն հետ անշուշտ աղերս ունի, խանդարեալ կը դնէ, —Հայ լեզուէն մեծաձայն բողոքող ծանօթ — նախադրութեան վրկայութեան դէմ— որպէս զի կարող ըլլայ նոյն բային «ընել որ քայլէ» իմաստը տալ։ Վերջապէս ոչ միայն զԹուրքն այլ և զԱրաբ դուստր Հայոյն դնելով՝ իւր ինքնադիր «բ«ելէն հ«բ«ելէն բնիկ արաբաձև բառը կը հանէ՝ ոչինչ համարելով եռատառ արմատական անյոդոդի կազմութիւնն։ Բայց արդեօք սկզբնատառ հին ի՞նչ զօրութիւն կուտայ, որ հեղինակին ցուցակին մէջ նոյն, նմն կը նշանակէ։

(Շարունակելի.)

Հ. ՍԵՐՈՎԲԷ ՏԷՐՎԻՇԵԱՆ
Մ. Ո

---

(5) Մի և նոյն այդ բառն է՝ որ իրմէ յառաջ ձայնաւոր գալուն պէս «ի կը փոխուի, և Վ կըլլայ եթէ նախընթաց ձայնաւորն «է։ Հաճեմատէ բան–ի–«, կարգ–«–«–բայց թա–«–վ։ Երբեմն նոյն բառն երկու ձևն ալ ունի. ինչպէս կանամբ և կնա«։

նել վարժապետութիւնը՝ նիւթապէս և բարոյապէս։

2. Վարժապետական Գլխաւոր կրնան մասնակցիլ ամէն կարէն վարժապետք և դպրոցէտք, պատուոյ անդամը ալ կրնան ընդունուիլ ուրիշ ազգէ կամ արհեստէ։

3. Գլխաւորն անդամները կը վճարեն ամէն ամիս՝ կամաւոր տուրքմը՝ որ ի պահեստ կը տրուի պատուաւոր վաճառականի մը կամ դրամատուն մը։

4. Վարժապետական Գլխաւորն դրամագլուխը պիտի գործածուի մանկավարժական հանդիսի մը կամ դրքերու տպագրութեան և երկրորդ՝ կարօտ վարժապետաց նպաստելու։

5. Գլխաւորն ցկեանս պաշտպան ընտրուած է Ամեն. Ներսէս Սրբազան։

Հէնդէր

ԵՂԻԱԶԱՐ ՄՈՒՐՈՅԵԱՆ

Ծան. Ընկերակցիլ ուզողք թող գրեն ինձ Ղալաթիա Արշակ էֆէնտիի վաճառատունը կամ Կ. Պոլիս Արամեան տպարանը։

Առաջին նիստը տեղի պիտի ունենայ 20 Սեպտեմբեր իւսկիւտար Իճատիէ Ե. Մուրատեանի տունը։

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

—o—

Բնիկ Սեբաստացի Մ. կարապետի որդի Սուքիաս Գալայճեան ազնուն քառասուն և հնգամեայ, միջահասակ, շէկ, բայց ճերմակ մազերով և քիչ մը կուզ ազդայնն՝ յինն ամաց հետէ զիւր ամուսնին և իննամեայ որդեկիկն յանկնամ վիճակի մէջ թողլով անյայտ եղած է. ուստի Պատրիարքարանս պարտ կը համարի հրատարակութեամբ պատուարժան ազգայնոց ծանուցանելով խնդրել որ բարեհաճին յիշեալ անձին ուր, ողջ կամ մեռեալ լինելն, եթէ գիտեն, ծանուցանել ի դրամատարմիկ վիճակի տարաբաղդ ընտանեացն։

Հաճեցէք Մեծ. էֆէնտի, կարելեկցաբար հրատարակել զայս՝ կանխաւ բնդունելով զխորին շնորհակալիք մեր։ Ամով մնամ՝ աղօթարար

10 Սեպտ. 1881 Պատր. փոխանորդ ի Պատրիարքարանի Գէորգ Ծ. վարդ.

Հայոց Կ. Պոլիս Բոսֆորէն

ԱՆԳԼԻԵՐԷՆ ԼԵԶՈՒԻ ՈՒՍՈՒՑՈՒՄՆ

ՍԲԸՆԹԱՑ ԵՂԱՆԱԿԱՒ

6 ամսոց մէջ հասկնալ, խօսիլ, գրել և կարդալ։

—

Ժամանակ և գեղէ են

Սէրասքէրի ճատտէն Միքայէլ աղայի ընկերցարանը, ըստ Ցանկաց ժամ 1.15.

Սիրքէճի իսկէլէսին թիւ 72 վաճառատունը, ժամ 3.30.

Ֆըշքճի փողոց թիւ 38, լիգական սեռի համար, ժամ 8.

Ֆըշքճի փողոց թիւ 38, արական սեռի համար, գիշերը ժամ 2։

Վճարք խիստ դիւրամատչելի են։ Տեղեկութիւնք կ'ստացուին Ֆրէնկեան գրատունէ յԱղուն Զարշը։

Բ. Ց. ՎԱՐԴՈՒԿԵԱՆՑ

ՏԷՄԻՐԳԱՓՈՒԼԵԱՆ ԵՂԲԱՐՑ

ԾԽԱԽՈՏԻՑ ԴՈՐԾԱՐԱՆ

ի Պօլիս Պ-ԼԷ Բաղչ 165

—

Պատիւ ունիմք ծանուցանել մայրաքաղաքիս և գաւառաց ժողովրդեան թէ՝ մեր ծխախոտի Պոլսոյ գործարանն և վաճառատունն այժմ փոխադրած եմք ի Պալըքբազար թիւ 165 եաղճըլար փողոցի դէմ։

Մեր ծխախոտներն, որ արդէն մեծ ընդունելութիւն գտած են ամէն տեղ, այս առթիւ զոհողութիւն չպիտի խնայեմք տեսակներն աւելի եւս աղնուացնելու և գիներն միշտ չափաւոր պահելու, որոց ստուգութեանը փորձով պիտի վկայեն ազնիւ յանախորդք և յանձնարարողք։

ՏԷՄԻՐԳԱՓՈՒԼԵԱՆ ԵՂԲԱՐՔ

—

ԽՄԲԱԳԻՐ—ՏՆՕՐԷՆ

Կ. Ս. ԻՒՓԻՒՇԵԱՆ

—

Ի ՏՊԱՐԱՆԻ ՄԱՄԻՍ ԼՐԱԳՐՈՑ

Կ. ՊՕԼԻՍ ՀԷՆԱԼ ՊԷՏ ԽԱՆ

Լրագիրս ամեն օր կը հրատարակուի՝ բաց ի կիրակի և տօն օրերէ։

Խմբագրութեան տեղն է Կ. Պոլիս, Պահէ-Գարու ճէլալ պէյ խան թիւ 31 Մասիսի խմբագրատունը։ Իսկ գաւառաց մէջ հետեւեալ հոգաբարձուաց գրասենեակները.

ԿԱՐԻՆ. Յոհաննէս էֆ. Տ. Մելքիսեդեկեան

ԵՐԶՆԿԱ. Յ. Շաւարշ էֆ.

ՍԵԲԱՍՏԻԱ. Երանոս էֆ. Սթամպոլեան

ՍԱՄՍՈՒՆ. Եդուարդ էֆ. Մուրատեան.

ԿԻՐԱՍՈՒՆ. Գ. էֆ. Թ. Մազմանեան.

ՌՈՏՈՍԹՕ. Արժ. Տ. Արիստակէս աւագ քահանայ Ֆէյզեան.

ԶՄԻՒՌՆԻԱ. Աբրահամ էֆ. Պէրզամպեան։

ՆԻԿՈՄԻԴԻԱ Խոսրով էֆ. Էսկիճեան.

ՏՐԱՊԻԶՈՆ. Ս. Եղիազարեան էֆ

ԵՒԴՈԿԻԱ. Գէորգ էֆ. Նապարեան

ՔԱՐԲԵՐԴ և ՏԷՐՍԻՄ. Կիրակոս էֆ. Ս. Ղազանճեան.

ՄՈՒՇ. Արմենակ էֆ. Խանդաղեանց

ՎԱՆ. Պետրոս » Գաբամճեան

ԲԵՐԻԱ. Սեդրակ » Խարաճեան.

ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏ. Թովմաս էֆ. Թաշճեան.

ԵԴԵՍԻԱ. Գէորգ էֆ. Կ. Ոսկերչեան

ՖՕՔՇԱՆ. Ֆէրհատ » Ս. Ֆէրհատեան.

ՏՓԽԻՍ. Պ. Նիկողայոս Տ. Ղևոնդեան.

ԿԱԼԿԱԹԱ. Պետրոս էֆ. Հէքիմեան։

ՓԱՆԱՍԷ

ԴԵՂ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԵՒ ԴԵՂ ՍԱՄԱՐԱՑԻՈՅՆ

—o—

Կը ծախուի Մինասեան և Ընկերաց Ամերիկեան վաճառատունը ի Ղալաթիա Կոստանդնուպոլսոյ։

Փանասէն իւր օգտակարութեամբն, ինչպէս Ասերիկայի և Եւրոպոյ, նոյնպէս և Թուրքիոյ այլ և այլ կողմերը մեծ ընդունելութիւն գտած է.

Փանասէն գեղացւոյն և գաւառացւոյն բժիշկն ու բարեկամն է, և մեծ օրհնութիւն մը համարուած է այն տեղերուն համար, ուր բժիշկ ու դեղ և դարման հազիւ կը գտնուին։ Փանասէն բուսոդեղներէ բաղադրեալ լինելով՝ բոլորովին անվնաս է։ Փանասէն այրածին ցաւը կ'առնէ ու քիչ ատենի մէջ կը բուժէ. նոյնպէս և մարմնոյն կտրուած ու ճմլուած տեղերուն ցաւն ու բորբոքը շուտով կ'անցնէ։

Ջղային, յօդային և ոսկրային սաստիկ ցաւերը բուժելով՝ տագնապեալը կը հանդարտեցնէ։ Ստամոքսի, փորի և աղեաց ցաւերը կը կտրէ ու պաղէ յառաջ եկած դժուարութեանց առաջքը կառնու։

Փանասէն ակռայի սաստիկ ցաւերը շուտով կը բուժէ։ Մարմնոյն կտրուած կամ վիրաւորեալ կողմերն առատ Փանասէ քսելով շուտ կը բժշկուին ու կը դոցուին։ Փանասէն կը բժշկէ նաև փորհարութիւն, լծանչք, հազ, ցերմ, կոկորդի բորբոքք և ուռեցք, մէջքի ցաւ և այլ գանազան ախտեր, որոց սկզբնապատճառը գրեթէ նոյնն են։ Այսպէս կը վկայեն շատեր, որք փորձած են։ Ընտանիք իրենց տան մէջ ու պանդուխտք և ճանապարհորդք իրենց մօտ Փանասէ պահելով և յանկարծական դժուարութեանց ատեն գործածելով՝ մեծ օգուտ կը քաղեն և ծանր հեւանաց առաջը կ'առնուն։ Փանասէն հեղուկ է, որ թէ՛ մարմնոյն վրայէն քսելով և թէ՛ խմելով ալ բժշկութիւն կը գործէ։

Գործածութեան կերպը հետն է։ Գլխաւոր վաճառատեղին է, Ղալաթիոյ Եէնի-Ճամիի դրան կից Մինասեանին Ամերիկեան վաճառատունը, նաև մայրաքաղաքիս դեղագործաց քով ու գաւառներն ալ կը գտնուին։

ԴՐԱՄԱԿԱՆ

ՂԱԼԱԹԻՈՅ ՓՈՐՍԱ

Ղալաթիա 15 սեպտ

ԸՆԹԱՑՔ ՓՈԽԱՆԱԿՈՒԹԵԱՆ

Ճամ. լիրան 100 ղրուշի հաշուով

Լոնտրա 3 ամիս, գրչ	108,15 առ Անգլ. Լ.
Փարիզ 3 » Ֆր.	23,37 1/2 — առ Օսմ. Լ.

ԸՆԹԱՑՔ ԱՐԺԵԹՂԹՈՅ

Օսմ. Ֆոնտ. գոցուեցաւ	— —
» » բացուեցաւ	18, 24
» » կէս օրին	18, 24
	Անգլ. լիր.
Ասիէթի ժ.էնրլ. 6 0/0	» 5,15
» Օթոման	» 4,10
Կ. Պոլսոյ Պանքան	» 12,
Գրէքսի ֆէնէրալ 6 0/0	Օսմ. լիր. 7,10
Փոխ. 1865 (Մութոն) 6 0/0	Ֆր. 92,
» 1866 (») 6 0/0	» 89,
» 1869 (Բինար) 6 0/0	» 88,
» 1872 (Ֆոն ամբ. Թրէշոր)	» 29,
» 1873 (Բինար) 6 0/0	» 88,
Բուժէլի երկաթուղի	Ֆր. 53,
Լաւրիում	» 147,
Թրամուայ	Օսմ. լիր 580,
Թրէֆոյրամ	» 1065
Հէվալէթիպ	37 1/2

Մէջտեղ

ԸՆԹԱՑՔ ԴՐԱՄՈՅ

(Օսմ. ոսկին 100 ղրշէն) Ղրշ.

Անգղիական ոսկի	109 12
Գաղղիական »	37 8
Բոլ	89 21
Գրիւնից	51 5
Գառապոն Թուղթ 8 բուպլի 61 գարիք	
Գառապոն արծաթ (նոր)	91 20
Մէհմիտիէի տարբերութիւն	7 16
Վենետոց	125 30
Հինգնոց	207 20
Հինգնոց (անկէտ)	180
Մէթալիք	205 20
Գրանտ	680

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՊՈՐՍԱ

—

Լոնտրա 26 սեպտ.

Անգլ. Ֆոնտ.	99 3/16
Սամ. »	16 1/8
Փոխ. 1865	13 3/4
» 1869	18
» 1871	76 1/2
» 1872	30
» 1873	18 1/8
» 1877	91 3/4
Պանք Օթոման	19 1/8
Ռուս. փոխ. 75ի	91 1/8
Եգիպտ. միացեալ	75 1/2
» արտօնեալ	95 3/4
Տայրա Պանքէ	73 5/8
Ֆոնտ. Ռոշիլտ	93 3/4
Փոխնկատիր Փարիզի վրայ	

—

Փարիզ 26 սեպտ.

Դաղղ. Ֆոնտ. 3 0/0	116 47 1/2
» » 3 0/0	84 72 1/2
Օսմ. Ֆոնտ.	16 65
Փոխ. 1865 Ֆր.	92,
» 1869	90,
» 1873	92.
Օսմ. երկաթուղի	55,25
Պանք Օթոման	759 37 1/2
Քրէտիտ Լիոնէ	950.
Ռուս. փոխ. 3 0/0 (1877)	93 3/8
» » Արևելեան	62 7/8
Իտալ. Ֆոնտ.	91
Եգիպտ. միացեալ	384,37 1/2
Փոխնկատիր Լոնտ. վրայ	—

—

Վիէննա 26 սեպտ.

Փոխ. Լոնտրայի վրայ	118 20
Բուժէլի երկաթուղի	26,

—



ՇԻՐՔԷԹԻ ԽԱՅՐԻԷԻ

ՇՈԳԵՆԱՒՆԵՐՈՒՆ ԵՐԹԵՒԵԿԻ ԺԱՄԵՐԸ

1881 ՍԵՊՏԵՄԲԵՐ 15 ԵՐԵՔՇԱԲԹԻ ՕՐԷՆ ՍԿՍԵԱԼ

ՄԻՆՉԵՒ ՍԵՊՏԵՄԲԵՐ 30

ԲՈՍՓՈՐԷՆ ԻՋՆՈՂ ՇՈԳԵՆԱՒՆՆԵՐԸ

Ժ.	Երթեւեկ Նաւերէ	Թիւ
12	Եէնիմահալլէն Մէզարպուրնու, Պէյիւքտէրէ, Թարապիա Եէնիքէյ Սթէնեա. Պոյանըքէյ. Ր. Հիսար. Պէպէք. (Արնաւուտ գիւղի շոգենաւին հետ պիտի հաղորդակցի.)	32
12 45	Ր. և Ա. Գավաք Եէնիմահալլէ Մէզարպ. Պէյիւքտէրէ. Թարապեա. Եէնիք. Էմիրկէն, Ր. Հիսար, Պէպէք. Արնավ	20
2	Եէնիմահալլէն Մէզարպ. Պէյիւքտ. Թարապիա. Եէնիքէյ, Պոյանըքէյ, Ր. Հիսար, Պէպէք։	18
3	Եէնիմահ. Մէզարպ. Պէյիւքտ. Քիրէճպ. Թարապ. Եէնիք. Սթէնեա Էմիրկէն. Ր. Հիսար, Պէպէք, Արնավ. Գուր. Օրթաք. Պէշիկ.	34
4	Եէնիմահ. Մէզր. Պէյիւքտ. Թարպ. Եէնիք. Սթէն. Պոյան.Էմիրկ. Ր. Հիսար, Պէպէք, Արնավ. Գուր. Օրթաք. Պէշիկ. Սիրքէճի։ (Ուրբաթ օրերը Սիրքէճի չպիտի հանդիպի։)	32
5	Եէնիմահ. Մէզրպուրնու Պէյիւքտէրէ Թարապեա Եէնիքէյ Միրկէօն, Ր. Հիսար Պէպէք, Արնավ. Գուր. Օրթաք. Պէշիք.	20
6 15	Եէնիմահալլէ. Պէյիւքտ. Թարապիա. Պէյքօզ Բաշպ. Եէնիք. Էմիրկ. Գանըճա. Ր. և Ա. Հիսար. Գանտ. Արնվուտքէյ, Զէնկէյք. Պէյլր. Օրթաքէյ, Գուզկունճուք. Պէշիկթաշ. Իւսկիւտար։	4
8	Ա. և Ր. Գավազ. Եէնիմահալլէ. Մէզարպուրնու. Պէյիւքտէրէ Թարապեա. Պէյգօզ. Եէնիքէյ. Էմիրկէն. Պոյանըքէյ. Ր. Հիսար, Պէպէք, Անավուտքէյ. Գուրուչէշմէ. Օրթաքէյ. Պէշիկթաշ. (Ուրբաթ օրերը Սթէնեա)	33
10	Մէզարպուրնուէն Պէյիւքտէրէ. Թարապիա. Եէնիքէյ, Էմիրկէն, Ր. Հիսար Արնավուտքէյ. Օրթաքէյ, Պէշիկթաշ։	19
	Աբնավուտ գեղէն	
12 15	Արնավուտքէյ. Գուրուչէշմէ. Օրթաքէյ. Պէշիկթաշ. Գապաթաշ։	22
12 45	Արնավուտքէյ, Գուրուչէշմէ. Օրթաքէյ. Պէշիկթաշ։	4
1 15	Պէպէք, Արնավուտքէյ. Գուրուչ. Օրթաք. Պէշիկթաշ. Գապաթաշ։	19
2	Արնավուտքէյ. Գուրուչ. Օրթաքէյ. Պէշիկթաշ.	22
2 30	Արնավուտքէյ, Գուրուչ. Օրթաք, Պէշիք.	23
3 15	Պէպէք, Արնավ. Գուր. Օրթաքէյ, Պէշիկթաշ։ Գապաթաշ.	19
	Ասիական գեղ։	
12 15	Արնավուտքէյ. Վանիքէյ. Զէնկէյքէյ. Պէյլերպէյ. Գուզկունճուք. Գապաթաշ։	23
12 45	Պէյքօզ, Բաշչապահճէ, Ր. Փ. մահ. Գանըճա. Ա. Հիսար, Գանտիլի, Վանիքէյ, Զէնկէյքէյ. Պէյլերպէյ, Գուզկ։	33
1 30	Պէյիւքտ. Թարպ. Պէյքօզ, Բաշչահճէ. Գանըճա. Ա. Հիսար, Գանտ. Վանիք. Զէնկ. Պէյլ. Գուզկ. Գապաթ. (Ուրբ. ժամ 2ին)	21
2 30	Պէյիւքտ. Թար. Պէյքօզ, Բաշչապ. Ր. Փ. մահ. Գանը Ա. Հիսար, Գանտ. Վանիք. Զէնկ. Պէյլր. Գուզկ. Պէշիկթաշ. (Բաց ի ուրբաթէ։)	17
4	Պէյքօզ Բաշչապ. Ր. փաշա մահ. Գանը. Ա. Հիսար, Գանտիլ Վանիք. Զէնկ. Պէյլ. Գուզկ. Սիրքէճի. (Ուրբ. օրերը Սիրքէճի չպիտի հանդիպի)։	22
8 45	Պէյիւքտ. Պէյքօզ, Բաշչապ. Գանը. Ա. Հիսար, Գանտիլի. Վանիք. Զէնկէյքէյ Պէյլերպէյ. Գուզկունճ Իւսկիւտար. (Ուրբաթ օրերը Ր. Փ. մահ. հանդիպելով։)	22
11	Գուզկունճուքէն ուղղակի կամուրջ։	23
	ԿԱՄՈՒՐՋԷՆ ԵԼՆՈՂ ՇՈԳԵՆԱՒՆԵՐԸ	
Ժ.	Երթեւեկ Նաւերէ	Թիւ
1 45	Գապաթաշ. Իւսկիւտար Պէշիկթաշ. Գուզկունճուք. Օրթաք. Պէյլ. Զէնկ. Արնվ. Գանտ. Ա. և Ր. Հիսար, Գանըճ. Էմիրկէն, Եէնիք Բաշչապ. Պէյքօզ Թարապ. Պէյիւք. Եէնիմահ։	4
2	Պէշիկթաշ, Օրթաքէյ, Գուր. Արնավ. Ր. Հիսար, Պոյան. Եէնիք. Թարպ. Պէյիւքտէրէ, Մէզար. Եէնիմահ.	32
3 15	Գապաթաշ, Պէշիկ. Օրթաք. Արնավ. Պէպէք, Ր. Հիսար, Էմիրկ. Եէնիքէյ, Թար. Պէյիւքտ. Մէզարպ. Եէնիմահ։	20
5	Պէշիկ. Օրթաք. Գուրուչէշմէ. Արնավ. Պէպէք. Ր. Հիսար, Պոյան. Էմիրկէն. Սթէն. Եէնիք. Պէյքօզ, Թար. Պէյիք. Մէզարպուրնու. Եէնիմահալլէ. Գավագլար։	33
6 30	Իւսկ. Պէշիկթաշ. Գուզկունճուք. Օրթաքէյ Պէյլերպէյ. Զէնկէյքէյ, Արնավուտքէյ, Գանտ. Ր. Հիսար. Գանը. Էմիրկ. Եէնիքէյ, Թարապիա, Պէյիւքտ։	22
8 10	Պէշիկ. Օրթաք. Արնավուտք. Պէպէք, Ր. Հիսար, Էմիրկէն, Եէնիք. Թարապեա. Պէյիւքտէրէ, Մէզարպուրնու.	19
9 15	Պէշիքթաշ, Օրթաք. Գուր. Արնվ. Պէպէք, Ր Հիսար, Էմիրկ. Եէնիք. Թար. Պէյիւքտ. Մէզար. Եէնիմահ. (Ուր. օրերը մինչև Մէզար.)	20
10	Պէպէք, Ր Հիսար, Պոյան. Էմիրկ. Եէնիք. Թարպ Պէյիւքտ. Մէզրպ. Եէնիմահալլէ։	18
10 30	Օրթաք Գուրուչ. Արնավ. Պէպէք, Ր. Հիսար, Էմիրկէն Սթէն. Եէնիք. Թարապ. Քիրէճպ. Պէյիւքտ. Մէզ. Եէնիմահ։	32
11 10	Պէպէք, Ր. Հիսար, Պոյան. Սթէն. Եէնիք. Թարպ. Պէյիւքտ. Մէզարպ Եէնիմահ։ (Հարաւային հողմերուն Սթէնեա չհանդիպիր)։	33
	Աբնավուտ գեղ	
1 30	Պէշիք. Օրթաք. Արնավուտքէյ։	22
1 45	Ուղղակի »	23
2 30	Պէշիկթաշ, Օրթաք. Գուր Արնավ.	19
11 5	Գապաթաշ, Պէշիկ Օրթաք. Գուրուչ. Արնավուտ.	22
11 40	Պէշիկ. Օրթաք. Գուրչ. Արնավ., Պէպէք։	9
12	Պէշիքթաշ. Օրթաք. Գուրուչ. Արնավ.	4
	Ասիական գեղ։	
2 30	Իւսկիւտ, Գուզկ. Պէյլ. Զէնկ. Վանիք. Գանտ. Ա. Հիսար, Գանը. Բաշչապահճէ, Պէյքօզ։ (Ուրբաթ օրերը Ր. Փ. մահ.)	21
9 30	Գապաթ. Գուզկ, Պէյլ. Զէնկ. Վանիք. Գանտ. Ա. Հիսար, Գանը. Բաշչ. Պէյքօզ, Մէզր. Գավագլար։ (Ուրբ. օրերը ժամ 10ին Ր. Փ. մահ)։	17
10 30	Պէյլ. Զէնկ. Վանիք. Գանտիլ. Ա. Հիսար, Գանը. Ր. փաշա մահ. Բաշչապ Պէյքօզ, Թարպ. Պէյիւքտ։ (Բաց ի ուրբաթէ)	34
10 30	Պէշիկթաշ. Գուզկունճուք.	23
11	Գուզկ. Պէյլեր. Զէնկէյք. Վանիք. Գանտ Ա. Հիսար, Գանը. Ր. Փ. մահ. Բաշչապ Պէյքօզ։	21
11 40	Գապաթ. Գուզկ. Պէյլ. Զէնկ. Վանիք. Արնավ.	23

Ամեն ուրբաթ իրիկուն շոգենաւ մը ժամը 11 ին Մէզարպուրնուէն Պէյիւքտէրէ, Թարապ. Եէնիքէյ Էմիրկէն Ր Հիսար Արնավուտքէյ Օրթաքէյ Պէշիքթաշ հանդիպելով կամուրջ պիտի վերադառնայ։